

Կարգ Ա. Պսակի Արարողութեան

- Հարսանեկան խումբի մուտք
- Տէրունական աղօթք
- Շարական «Այսօր Երկնայինքն»
- Խրատ
- Մատանիներու օրհնութիւն
- Աջ ձեռքերու միացում
- Շարական «Նայեա ի մեզ»
- Շարական «Ուրախ լեր»
- Ս. Աւետարանի մուտք՝ Սուրբ Աստուած երգով
- Ս. Գրային ընթերցումներ
- Թագադրութիւն՝ «Թագաւոր Երկնաւոր»-ի երգեցողութեամբ
- Թագադրութեան աղօթք
- Գինիի օրհնութիւն
- Քարոզ
- Պահպանիչ
- Արձակում

Բացատրութիւն Ա. Պսակի Խորհուրդին

Պսակը Հայ եկեղեցւոյ մէջ խորհուրդ մըն է ուր մարդ ու կին Քրիստոսի, քահանայի եւ հարսնետրմերու ներկայութեան կ'ուխտեն իրար հանդէպ յարգալից ըլլալ իրենց կեանքի ամբողջ ընթացքին: Ա. Պսակի արարողութիւնը լեցուն է խորհրդանշական միտքերով:--

Խրատ

Հոս հարսն ու փեսան բոլորի ներկայութեան կ'արտասանեն իրենց «Այո»ն եւ կը խոստանան բոլոր պարագաներու տակ իրարու հաւատարիմ ըլլալ:

Մատանիներու Օրհնութիւն

Մատանիներու օրհնութենէն ետք, գոյգերը իրենց մատանիներու փոխանակումով կը վստահեցնեն գիրար որ իրենց սէրը իրար հանդէպ պիտի ըլլայ անսահման եւ անվերջ:

Թագադրութիւն

Թագադրութիւնը գէնիթն է պսակի խորհուրդին: Թագերը կը խորհրդանշեն Աստուծոյ շնորհքը եւ փառքը որով Աստուած կը թագադրէ գոյգերը արարողութեան ընթացքին: Անոնք կը թագադրուին որպէս թագաւոր եւ թագուհի իրենց տան փոքր թագաւորութեան մէջ, որուն վրայ անոնք իշխելու են իմաստութեամբ, արդարութեամբ եւ պատուով: Թագը խորհրդանշէ է նաեւ գոհողութեան: Թագ հագնողները պէտք է պատրաստ ըլլան ամէն պարագային գոհաբերութիւն ցուցաբերել:

Գինիի Օրհնութիւն

Գինին Ս. Գրքի մէջ խորհրդանշէ է ուրախութեան: Եկեղեցին կը մաղթէ որ գոյգերու կեանքը լի ըլլայ ուրախութեամբ: Իսկ նոյն բաժակէն խմելով, գոյգերուն կը թելադրուի, որ այս պահէս սկսեալ անոնք պարտին միշտ նոյն աղբիւրէն խմելու: